Դատական ակտ:	<p>Գործ ԱՐԴ/0071/01/14 Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ</p> <p>2014 թվականի դեկտեմբերի 17-ին Երևան քաղաքում</p> <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ</p> <p>ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ Ս. ՉԻՉՈՅԱՆ ԴԱՏԱՎՈՐՆԵՐ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ</p> <p>ՔԱՐՏՈՒԴԱՐՈՒԹՅԱՄԲ՝ Ն. ԱՍԱՏՐՅԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝</p> <p>ՄԵՂԱԴՐՈՂ՝ Հ. ՀԱԿՈՔՅԱՆԻ ՊԱՇՏՊԱՆ՝ Ց. ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԱՄԲԱՍՏԱՆՅԱԼ՝ Ա. ՍԱՂՈՎՆԻՉԻՅԻ</p> <p>դռնբաց դատական նիստում, վճռաբեկ վարույթի կանոններով, քննության առնելով ամբաստանյալ Արմեն Սաղովնիչիյի վերաքննիչ բողոքը՝ Արմեն Յուրիի Սաղովնիչիյի վերաբերյալ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճռի դեմ</p> <p>Պ Ա Ր Զ Ե Ց</p> <p>1. Գործի դատավարական նախապատմությունը.</p> <p>2013 թվականի դեկտեմբերի 13-ին, ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով, հարուցվել է թիվ 58214713 քրեական գործը:</p> <p>2014 թվականի փետրվարի 06-ին Արմեն Յուրիի Սաղովնիչիյը ներգրավվել է որպես մեղադրյալ և նրան մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով:</p> <p>2014 թվականի փետրվարի 06-ին, քննիչի որոշմամբ՝ մեղադրյալ Արմեն Յուրիի Սաղովնիչիյի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է ստորագրություն չհեռանալու մասին:</p> <p>2014 թվականի մայիսի 20-ին, որոշում է կայացվել մեղադրյալ Արմեն Յուրիի Սաղովնիչիյին առաջադրված մեղադրանքը փոփոխելու և կրկին ՀՀ քրեական</p>	

օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրանք առաջադրելու մասին:
2014 թվականի մայիսի 20-ին մեղադրյալ Արմեն Յուրիի Սադովնիչիյի նկատմամբ
ՀՀ քրեական օրենսգրքի 181-րդ հոդվածի 1-ին մասով քրեական հետապնդում չի
իրականացվել՝ տուժողի բողոքի բացակայության հիմքով:
2014 թվականի մայիսի 23-ին, թիվ 58214713 քրեական գործն ըստ մեղադրանքի՝
Արմեն Յուրիի Սադովնիչիյի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին
մասով, մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել է ՀՀ Արմավիրի մարզի
ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան:
ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը,
դատական քննության արագացված կարգի կիրառմամբ, 2014 թվականի
սեպտեմբերի 25-ի դատավճռով ամբաստանյալ Արմեն Յուրիի Սադովնիչիյին
մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով
նախատեսված հանցագործության կատարման մեջ և այդ հոդվածի սանկցիայով
դատապարտել ազատազրկման 2/երկու/ տարի 6/վեց/ ամիս ժամկետով՝ գույքի
բռնագրավմամբ, այն է՝ 283.600 /երկու հարյուր ութսունվեց հազար վեց հարյուր/
Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք գույքի:
Արմեն Յուրիի Սադովնիչիյի իր նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված
պատիժը կրելու է ՀՀ արդարադատության նախարարության
քրեակատարողական վարչության համապատասխան քրեակատարողական
հիմնարկությունում:
Արմեն Յուրիի Սադովնիչիյի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝
ստորագրություն չհեռանալու մասին, թողել է անփոփոխ, մինչև դատավճռի
օրինական ուժի մեջ մտնելը:
Արմեն Յուրիի Սադովնիչիյի պատժի կրման սկիզբը հաշվել է փաստացի
արգելանքի վերցնելու՝ կալանավորելու պահից:
Վճռել է Արմեն Յուրիի Սադովնիչիյի գույքի վրա դրված արգելանքը /կալանքը/
պահպանել՝ մինչև բռնագրավման ենթակա համարժեք այլ գույքի բռնագրավման
հարցի լուծումը:
Քրեական գործով իրեղեն ապացույցներ, քաղաքացիական հայց, դատական
ծախսեր չկան, այդպիսիք համարել է լուծված:
Քրեական գործով այլ ապացույց ճանաչված փաստաթղթերը թողել գործի
վարույթում:
Դատավճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել ամբաստանյալ Արմեն Յուրիի
Սադովնիչիյը:
Քրեական գործը ՀՀ վերաքննիչ քրեական դատարան մուտք է եղել 2014
թվականի նոյեմբերի 03-ին:
ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի նոյեմբերի 05-ի որոշմամբ
վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և քրեական գործը նշանակվել՝
քննության վճռաբեկ դատարանում գործերի քննության համար սահմանված
կանոններով:
Վերաքննիչ բողոքի դեմ գրավոր պատասխան չի ստացվել:

2. Գործի փաստական հանգամանքները.

Արմեն Սադովնիչիյը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի
1-ին մասով, հետևյալ արարքի համար.
Արմեն Յուրիի Սադովնիչիյը, 2013 թվականի հոկտեմբերի 25-ին համացանցի
<http://forum.beznal.cc> կայքում հայտնաբերելով ամերիկյան <<Citibank N.A.
Columbus Georgia>> բանկի Վարեն Թեյլորի անվամբ թիվ 5491139385738340
քարտի, <<Associated Bank, N.A. Stevens Point Wisconsin>> բանկի Ջոնատոն
Սիրյեռի անվամբ թիվ 5147518046339408 քարտի և <<Fia Card Services, National
Assaciation, Wilmington, Delaware>> բանկի Ալի Ահմեդի անվամբ թիվ
4342880017870456 քարտի և նույն բանկի Գրեգորի Սեիզվորթի անվամբ թիվ
4313072414798804 քարտի ամբողջական տվյալները, համակարգչային
տեխնիկայի օգտագործմամբ, նշված քարտերի հաշիվներից հափշտակել է զգալի
չափերով՝ 283.600 ՀՀ դրամ գումար, ապա հանցավոր ճանապարհով ստացված
եկամուտների ծագման աղբյուրը, տեղաշարժը թաքցնելու և խեղաթյուրելու
նպատակով, կատարել մի շարք բանկային և, այլ փոխանցումներ և
փոխարկումներ, այդ թվում՝ օգտագործելով էլեկտրոնային վճարային
համակարգեր, այնուհետև կանխիկացրել և տնօրինել է հափշտակված
գումարները, որով իսկ օրինականացրել է դրանք:
Այսպես, նպատակ ունենալով <http://forum.beznal.cc> կայքում տեղադրված

վերոնշյալ բանկային քարտերի հաշվեհամարներից գումարներ հափշտակել, ապա դրանց ծագման աղբյուրը և տեղաշարժը թաքցնելով և խեղաթյուրելով օրինականացնել, նախապես, մինչև գումարների հափշտակության, համացանցի <<www.facebook.com>> և <<www.odnoklassniki.ru>> սոցիալական կայքերում տեղադրել է աշխատանքի առաջարկի հայտարարություն՝ ներկայացնելով, թե իբր <<Վեստիբյուլար>> անվանմամբ կազմակերպությունն աշխատանքի է հրավիրում համագործակցել ցանկացող անձանց՝ օրեկան 5000 ՀՀ դրամ աշխատավարձով, որի արդյունքում հավաքագրել է ՀՀ քաղաքացիներ Կատերինա Գագիկի Մնացականյանին, Ռոզա և Սյուզի Սպարիկի Սարգսյաններին և հասանելիություն է ստացել <<Իդրամ>> համակարգում գրանցված նրանց համապատասխանաբար ID-277529118, ID-587423810 և ID-595325627 հաշվառման հաշիվներին, դրանց տնօրինման համար պահանջվող գաղտնաբառերին և ֆինանսական գործարքներ իրականացման համար նախատեսված PIN ծածկագրերին, որից հետո, 2013 թվականի հոկտեմբերի 25-ին, <<http://forum.beznal.cc>> կայքում տեղադրված վերոնշյալ բանկային քարտերի հաշիվներից զգալի չափերով՝ 283.600 ՀՀ դրամ գումար է հափշտակել, մասնավորապես ամերիկյան <<Associated Bank, N.A. Stevens Point Wisconsin>> բանկի Ջոնատոն Սիրյեռի անվամբ թիվ 5147518046339408 քարտի հաշվից հափշտակել է 51.230 ՀՀ դրամ գումար, իսկ <<Citibank N.A. Columbus Georgia>> բանկի Վարեն Թեյլորի անվամբ թիվ 5491139385738340 քարտի հաշվից հափշտակել է 51.230 ՀՀ դրամ գումար, իսկ <<Citibank N.A. Columbus Georgia>> բանկի Վարեն Թեյլորի անվամբ թիվ 5491139385738340 քարտի հաշվից հափշտակել է 10.246 և 30.738 ՀՀ դրամ գումար: Հափշտակված ընդհանուր 92.214 ՀՀ դրամ գումարը Ա. Սադովնիչիյը փոխանցել է <<Իդրամ>> համակարգի Կ. Մնացականյանի անվամբ գրանցված ID-277529118 հաշվեհամարին, որի վրա փոխանցումներից առաջացած համապատասխան պահումներով մուտքագրվել է 90.000 ՀՀ դրամ գումար: Նույն օրն ամերիկյան <<Fia Card Services, National Association, Wilmington, Delaware>> բանկի Գրեգորի Սեիգվորթի անվամբ թիվ 4313072414798804 քարտի հաշվից հափշտակել է 10.246 և 30.738 ՀՀ դրամ գումար: Հափշտակված ընդհանուր 92.214 ՀՀ դրամ գումարը փոխանցել <<Իդրամ>> համակարգի Կ. Մնացականյանի անվամբ գրանցված ID-277529118 հաշվեհամարին, որի վրա փոխանցումներից առաջացած համապատասխան պահումներով մուտքագրվել է 90.000 ՀՀ դրամ գումար: Նույն օրն ամերիկյան <<Fia Card Services, National Association, Wilmington, Delaware>> բանկի Գրեգորի Սեիգվորթի անվամբ թիվ 4313072414798804 քարտի հաշվից հափշտակել է 10.246 ՀՀ դրամ, իսկ նույն բանկի Ալի Ահմեդի անվամբ թիվ 4342880017870456 քարտի հաշվից հափշտակել է 1.025, 20.492, 51.230 և 15-369 ՀՀ դրամ գումար և հափշտակված ընդհանուր 98.362 ՀՀ դրամ գումարը նույն օրը՝ 2014 թվականի հոկտեմբերի 25-ին փոխանցել է Ռոզա Սարգսյանի անվամբ գրանցված ID-587423810 հաշվեհամարին, որի վրա փոխանցումներից առաջացած համապատասխան պահումներով մուտքագրվել է 96.000 ՀՀ դրամ գումար: <<Fia Card Services, National Association, Wilmington, Delaware>> բանկի վերոնշյալ Ալի Ահմեդի թիվ 4342880017870456 քարտի հաշվից նույն օրը հափշտակել է 100.000 ՀՀ դրամ գումար և փոխանցել Սյուզի Սարգսյանի թիվ ID-595325627 հաշվեհամարին, որի վրա փոխանցումներից առաջացած համապատասխան պահումներով մուտքագրվել է 97.600 ՀՀ դրամ գումար: Հանցավոր ձանապարհով ստացված ընդհանուր 283.600 ՀՀ դրամ գումարի ծագումը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով <http://forum.beznal.cc>> կայքում տեղադրված օտարերկրյա քաղաքացիների բանկային քարտերից գումարները հափշտակելով, Ա. Սադովնիչին ուղղակիորեն չի փոխանցել <<WebMoney>> համակարգի իր անվամբ հաշվեհամարին, այլ փոխանցել է <<Իդրամ>> համակարգի՝ Կատերինա Մնացականյանի, Ռոզա և Սյուզի Սարգսյանների հաշվեհամարներին, այնուհետև 283.600 ՀՀ դրամը փոխակերպելով 683 ԱՄՆ դոլարի, նույն օրը՝ 2013 թվականի հոկտեմբերի 25-ին, 584 ԱՄՆ դոլարը փոխանցել է <<WebMoney>> համակարգի Z934972973931 էլեկտրոնային քսակին փոխանցված 584 ԱՄՆ դոլար գումարը նույն օրը փոխանցել է իր Z318400369315 էլեկտրոնային քսակին մուտքագրվել է հանցավոր ձանապարհով ստացված 677 ԱՄՆ դոլար գումարը, որը տնօրինել է իր հայեցողությամբ, մասնավորապես՝ կրկին փոխարկելով այդ գումարից 172.000 ՀՀ դրամ 2013 թվականի հոկտեմբերի 25-ից 27-ն ընկած ժամանակահատվածում փոխանցել է <<Իդրամ>> համակարգի իր 29382463 հաշվառման հաշվին, իսկ մնացած մասն օգտագործել է համացանցում՝ վճարումներ կատարելով: <<Իդրամ>> համակարգի իր հաշվեհամարին պահվող 172.000 դրամից 8000 ՀՀ

դրան Ա. Սաղովնիչին օգտագործել է բջջային հեռախոսահամարը վերալիցքավորելու համար, իսկ 160.000 ՀՀ դրամը 2013 թվականի հոկտեմբերի 29-ին փոխանցել է «Արարատ Բանկ» ՓԲ ընկերությունում բացված իր 11294030101 դոլարային հաշվեհամարին, որը փոխակերպվել է 395 ԱՄՆ դոլար գումարի, որից հետո նույն օրն այն կանխիկացրել է «Արարատ Բանկ» ՓԲ ընկերության էջմիածին քաղաքի մասնաճյուղում, որով իսկ հանցավոր ճանապարհով ստացված այդ գումարներն օրինականացվել են:

3. Վերաքննիչ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վերաքննիչ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով:

Ամբաստանյալ Արմեն Սաղովնիչիչը վերաքննիչ բողոքում՝ ներկայացնելով գործի դատավարական նախապատմությունը, նշել է որ դատավճիռը բողոքարկում է պատժի մասով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների հիմքով:

Վկայակոչելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ և 70-րդ հոդվածների դրույթները, նշել է, որ նախկինում արատավորված և դատապարտված չի եղել, բնութագրվում է դրական, ունի բարձրագույն կրթություն, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքներ են՝ առաջադրված մեղադրանքում իրեն մեղավոր է ճանաչել և անկեղծորեն զոջացել, խոստովանական ցուցմունքներ է տվել և քննությանն աջակցել: Խնամքին են վատառողջ մայրը և թոշակառու տատը, ընտանիքի միակ կերակրողն է, պատրաստ է վճարել բռնագանձման ենթակա գումարը:

Պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ չեն արձանագրվել:

Գտնում է, որ այս պայմաններում դատարանը պետք է կիրառեր ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածը և իր նկատմամբ ազատազրկման ձևով նշանակված պատիժը չկիրառեր՝ սահմանելով փորձաշրջան, իսկ բռնագանձման ենթակա գումարն ինքը պատրաստ է վճարել:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-379-րդ հոդվածները, խնդրել է՝ պատժի մասով, փոփոխել Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճիռը և ազատազրկման ձևով նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառել, կամ նշանակել մեղմ պատիժ:

4. Վերաքննիչ բողոքի դեմ բերված պատասխանը.

Գործով մասնակցող մեղադրող Հ.Հակոբյանն ամբաստանյալի վերաքննիչ բողոքի դեմ առարկեց, խնդրելով մերժել այն, պատճառաբանելով, որ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 25-ի դատական ակտն ամբաստանյալ Արմեն Սաղովնիչիչի նկատմամբ օրինական է և հիմնավորված, այն փոփոխելու հիմքեր չկան:

5. Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Վերաքննիչ դատարանը քննության առնելով վերաքննիչ բողոքը՝ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում, լսելով բողոքում ներկայացված հետևությունները հիմնավորելու մասին պաշտպանության կողմի ելույթը, դատական ակտը չբողոքարկած մեղադրողի պատասխանը, վերլուծելով քրեական գործի նյութերը, դրանք գնահատելով իրենց համակցությամբ, ներքին համոզմամբ, հանգում է հետևության, որ վերաքննիչ բողոքը պետք է մերժել հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 385-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վերաքննիչ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը ներկայացվում են բացառապես վերաքննիչ բողոքում, և դրանք չեն կարող փոփոխվել և լրացվել գործի դատական քննության ընթացքում:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

<<Պատավճիռ կայացնելիս դատարանը ներկայացված հաջորդականությամբ լուծում է հետևյալ հարցերը`...

6) ենթակա է արդյոք պատժի ամբաստանյալն իր կատարած հանցանքի համար.

7) ինչ պատիժ պետք է նշանակվի ամբաստանյալի նկատմամբ.

8) ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը...>>:

Նշված իրավադրույթից երևում է, որ կոնկրետ պատժաչափով կոնկրետ պատժատեսակի նշանակումը և արդեն իսկ նշանակված պատիժը կրելու անհրաժեշտության հարցի լուծումն իրենցից ներկայացնում են պատժի հարցերի դատական լուծման գործընթացի ինքնուրույն և հաջորդական փուլեր: Այսինքն՝ դատարանը նախ որոշում է ամբաստանյալի՝ պատժի ենթակա լինելու հարցը, այնուհետև՝ դրա տեսակը և չափը, որից հետո որոշում, թե ամբաստանյալն արդյոք պետք է կրի իր նկատմամբ նշանակված պատիժը՝ հաշվի առնելով առանց նշանակված պատիժը փաստացի կրելու դրա նպատակներին հասնելու հնարավորությունը:

Նշված հարցերի լուծման ընթացքում դատարանը պետք է ղեկավարվի << քրեական օրենսգրքի ընդհանուր մասի մի շարք հոդվածներով:

Մասնավորապես՝ << քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ հանցանք կատարած անձի նկատմամբ կիրառվող պատիժն արդարացի է, եթե համապատասխանում է հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին, հանցավորի անձնավորությանը, անհրաժեշտ և բավարար է անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար:

<< քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է քրեական օրենսգրքի <ատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

<< քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվող պատժի նպատակն է վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները:

Պատիժ նշանակելիս և այն կրելու նպատակահարմարության հարցը քննարկելիս դատարանը հաշվի է առնում նաև << քրեական օրենսգրքի 62-րդ և 63-րդ հոդվածներով նախատեսված պատասխանատվությունն ու պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները:

Քրեական օրենսգրքի Ընդհանուր մասի վերը թվարկված դրույթներից հետևում է, որ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ ինչպես պատժատեսակի և պատժաչափի, այնպես էլ նշանակված պատիժը կրելու նպատակահարմարության վերաբերյալ դատարանի կողմից կայացված որոշումը պետք է հիմնված լինի կատարած հանցագործության, դրա առանձնահատկությունների, գործի կոնկրետ հանգամանքների, հանցավորի անձի, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքների բազմակողմանի գնահատման վրա՝ նպատակ ունենալով ապահովել << քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում նշված պատժի նպատակների իրագործման հնարավորությունը:

<< քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն՝ <<1. Եթե դատարանը, կալանքի, ազատազրկման կամ կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելով, հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու, ապա կարող է որոշում կայացնել այդ պատիժը պայմանականորեն չկիրառելու մասին:

2. Պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը հաշվի է առնում հանցավորի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները (...)>>:

<< Վճռաբեկ դատարանը Կ. Հարությունյանի վերաբերյալ 2007 թվականի նոյեմբերի 30-ի ՎԲ-201/07 որոշմամբ՝ պատժի արդարացիության հետ կապված հետևյալ դիրքորոշումն է արտահայտել. << (...) Պատիժը համարվում է արդարացի, եթե դատարանը ճիշտ է գնահատում գործի բոլոր հանգամանքները, անձը բնութագրող տվյալները և, քրեական օրենքով նախատեսված պահանջներից ելնելով, հանցագործության մեջ մեղավոր անձի նկատմամբ նշանակում է այնպիսի պատիժ, որն անհրաժեշտ է և բավարար է այդ անձին ուղղելու և նրա կողմից նոր հանցանքի կատարումը կանխելու համար: (...)>>:

Հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանի և բնույթի

հետ կապված հարցերի վերաբերյալ իր դիրքորոշումը ՀՀ վճռաբեկ դատարանն արտահայտել է Գ.Մադաթյանի վերաբերյալ 2009 թվականի փետրվարի 17-ի ԵՇԴ/0029/01/08 որոշման մեջ, համաձայն որի՝ «(...) Արարքի հանրային վտանգավորության բնույթը հանցագործության որակական կողմն է, այն որոշվում է մեղքի ձևի և տեսակի, հանցագործության նպատակի և շարժառիթի, ինչպես նաև քրեական օրենսդրությամբ պահպանվող հասարակական հարաբերության՝ հանցանքի կատարման պահին ունեցած սոցիալական նշանակության վերաբերյալ փաստական տվյալների ամբողջությամբ: Արարքի հանրային վտանգավորության աստիճանի որոշման ժամանակ դատարանը պետք է բացահայտի կատարված հանցագործությամբ պատճառված վնասի չափը, հանցագործության կատարման եղանակը, հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, հանցակցության դեպքում՝ հանցավորի կատարած արարքը և հանցագործությանը նրա մասնակցության աստիճանը»:

ՀՀ վճռաբեկ դատարանը Դավիթ Հովհաննիսյանի վերաբերյալ 2009 թվականի դեկտեմբերի 18-ի ԵԱԲԴ/0078/01/09 որոշմամբ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ չնայած պատիժը պայմանականորեն չկիրառելու հետ կապված ՀՀ քրեական օրենսգրքը ինչպես հանցագործությունների, այնպես էլ անձանց շրջանակի որևէ սահմանափակում չի նախատեսել, սակայն դատարանը պարտավոր է, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով նախատեսված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով, հաշվի առնել նաև հանցագործության հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը: Դատարանի կողմից նշանակվող պատժի արդարացիության հիմնական պահանջն այն է, որ պատիժը պետք է համապատասխանի հանցագործության վտանգավորության աստիճանին ու բնույթին:

ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հիմնական պայմանը պատճառաբանված լինելն է: Նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելիս դատարանը պետք է հանգամանորեն քննության առնի ինչպես հանցագործության կատարման, այնպես էլ հանցավորի անձին վերաբերող բոլոր հանգամանքները: Կարևորն այն է, որ հանգի հիմնավոր եզրակացության, որ դատապարտյալի ուղղումը հնարավոր է առանց պատիժը կրելու: Դատարանը նման հետևության հանգում է միայն գոյություն ունեցող տվյալների օբյեկտիվ վերլուծության հիման վրա, որոնք բնութագրում են արարքը, հանցավորի անձը և վկայում են պատիժը պայմանականորեն չկիրառելու հիմքերի առկայության մասին:

Վերաքննիչ դատարանն արձանագրում է, որ Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Արմեն Սադովնիչիյի նկատմամբ պատիժ նշանակելիս, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով՝ բավարար չափով ստուգման և գնահատության է ենթարկել կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, ամբաստանյալի անձը բնութագրող և պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները՝ այն, որ նա զղջացել է կատարածի համար, նախկինում դատված, արատավորված չի եղել, խնամքին են վատաբույրվում մայրը և թոշակառու տատը, ունի բարձրագույն կրթություն, բնութագրվում է դրական, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը և գտել է, որ ամբաստանյալի նկատմամբ պետք է նշանակել պատիժ՝ ազատազրկում երկու տարի վեց ամիս ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ, այն է՝ 283.600 ՀՀ դրամին համարժեք գույքի:

Առաջին ատյանի դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասով, 48-րդ հոդվածի 2-րդ մասով, 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, գտել է, որ Արմեն Սադովնիչիյի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը կապահովի պատժի նպատակները:

Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ամբաստանյալ Արմեն Սադովնիչիյի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորության և ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ հոդվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցերը, գտնում է, որ Արմեն Սադովնիչիյը ենթակա է պատժի կատարած հանցանքի համար՝ դատարանի կողմից նշանակված պատիժը համաչափ է կատարած արարքի ծանրությանը, ամբաստանյալի անձին և նա պետք է կրի ազատազրկման ձևով նշանակված պատիժը:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Արմեն Սադովնիչիյի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը չի կարող ապահովել

պատժի նպատակները, վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները, և հանգում է հետևության, որ առկա չէ համոզվածություն, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու:
 Այս առումով պաշտպանության կողմի պատճառաբանությունները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ սույն գործի շրջանակներում Արմեն Սաղովնիչիյի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու համար:
 Քննության առնելով վերը նշված հանգամանքներն իրենց համակցության մեջ, վերաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի պահպանմամբ, հետևաբար, այն պետք է թողնել օրինական ուժի մեջ, իսկ վերաքննիչ բողոքը՝ առանց բավարարման:
 Ելնելով վերոգրյալից և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 393-394-րդ, 402-րդ և 418-րդ հոդվածներով՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

Ամբաստանյալ Արմեն Սաղովնիչիյի վերաքննիչ բողոքը մերժել:
 ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճիռը քրեական գործով ըստ մեղադրանքի՝ Արմեն Յուրիի Սաղովնիչիյի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով, թողնել օրինական ուժի մեջ:
 Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ ստորագրություն
 ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝ ստորագրություններ
 Իսկականի հետ ճիշտ է՝
 ՆԱԽԱԳԱՀՈՂ ԴԱՏԱՎՈՐ՝ Ս. ԶԻՉՈՅԱՆ

Դատական ակտի ամսաթիվը: 17-12-2014

Ամսաթիվ: 23-01-2015

Էջերի քանակը: 268, 194

Գործին կից նյութեր:

Այլ նշումներ:

Գործը ուղարկվել է
 Գործն ուղարկվել է: 23-01-2015

Էջերի քանակը: 268, 194

Գործին կից նյութերը:

Ուր: Արմավիրի մարզ

Գրության համարը: Ե-963/15

Այլ նշումներ:

Գործը բողոքարկվել է
 Ամսաթիվ: 02-02-2015

Դատական Գործ N: ԱՐԴ/0071/01/14

Ամսաթիվ:	02-02-2015
Բողոք բերող անձինք:	Ամբաստանյալի պաշտպան
Բողոք բերող անձինք	
Անուն	Գեորգի
Ազգանուն	Մելիքյան
Հասցե	ք.Երևան, Մուրացան փողոց 109 շենք, 6 բնակարան
Այլ	ամբաստանյալ՝ Արմեն Յուրիի Սադովնիչի
Փաստաբան	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Ղատապարտյալ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Չափաիս:	Այո
Պատասխանի ստացման ամսաթիվը:	
Պատասխանի բովանդակությունը:	
Բողոքը ստացվել է:	Գործն ըստ էության լուծող դատական ակտի դեմ
Գործի առաքման ամսաթիվը:	04-02-2015
Գրության համարը:	Ե-827
Գործի ստացման ամսաթիվը:	26-02-2015
Քրեական գործի հատորներ /փաստաթղթեր/:	2 հատոր
Ղատապարտյալ	
Անուն	
Ազգանուն	
Հասցե	
Գործի համարը:	ԱՐԴ/0071/01/14
Գործը ստացվել է:	Արմավիրի մարզ
Գործը ստացվել է:	
Գործը ստացվել է:	
Պատասխանատվության ենթարկվածների թիվը:	1
Ամսաթիվ:	26-02-2015
Նախագահող դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ

Դատավորի անուն:	Դավիթ Զաքարի Ավետիսյան
Դատավոր	
Դատարանի անվանում:	Վճռաբեկ
Դատավորի անուն:	Արթուր Վլադիմիրի Պողոսյան
Այլ նշումներ:	
Ամսաթիվ:	07-05-2015
Որոշման բովանդակություն:	<p>ԱՐԴ/0071/01/14</p> <p>ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ ՈՐՈՇՈՒՄ ՀԱՆՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԲՈՂՈՔԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ</p> <p>7 մայիսի 2015 թվական ք.Երևան</p> <p>ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատը (այսուհետ՝ Վճռաբեկ դատարան),</p> <p>նախագահությամբ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ մասնակցությամբ դատավորներ Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆԻ Ս.ՕՀԱՆՅԱՆԻ</p> <p>քննարկելով Արմեն Յուրիի Սադովնիչիյի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Սադովնիչիյի պաշտպան Գ.Մելիքյանի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հարցը,</p> <p>ՊԱՐԶԵՑ</p> <p>Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը (այսուհետ նաև՝ Առաջին ատյանի դատարան), կիրառելով դատական քննության արագացված կարգ, 2014 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճռով Արմեն Սադովնիչիյին մեղավոր է ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 1-ին մասով և դատապարտել ազատազրկման 2 տարի 6 ամիս ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ՝ 283.600 ՀՀ դրամի չափով:</p> <p>Ամբաստանյալի վերաքննիչ բողոքի հիման վրա քննության առնելով քրեական գործը՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը (այսուհետ նաև՝ Վերաքննիչ դատարան) 2014 թվականի դեկտեմբերի 17-ին որոշում է կայացրել բողոքը մերժելու, Առաջին ատյանի դատարանի 2014 թվականի սեպտեմբերի 25-ի դատավճիռը՝ օրինական ուժի մեջ թողնելու մասին:</p>

Վերաքննիչ դատարանի վերոգրյալ որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել ամբաստանյալ Ա.Սադովնիչիյի պաշտպան Գ.Մելիքյանը՝ խնդրելով բեկանել Վերաքննիչ դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 17-ի որոշումը և գործն ուղարկել ստորադաս դատարան՝ նոր քննության, կամ ամբաստանյալ Ա.Սադովնիչիյի նկատմամբ նշանակված պատիժը ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կարգով պայմանականորեն չկիրառել՝ սահմանել փորձաշրջան՝ 5 տարի ժամկետով:

Բողոք բերած անձը փաստարկել է, որ բողոքը պետք է ընդունվի քննության, քանի որ առկա է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքը, այն է՝ առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Բողոք բերած անձի պնդմամբ՝ ստորադաս դատարանների դատական ակտերն անօրինական են, անհիմն և կայացվել են ամբաստանյալ Ա.Սադովնիչիյի դատավարական իրավունքների էական խախտմամբ: Մասնավորապես՝ բողոքի հեղինակը գտել է, որ Առաջին ատյանի դատարանը խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 360-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի պահանջները, իսկ Վերաքննիչ դատարանը, ամբաստանյալ Արմեն Սադովնիչիյի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կանոնները չկիրառելով, խախտել է ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ, 48-րդ, 61-րդ հոդվածների, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 358-րդ և 397-րդ հոդվածների պահանջները՝ անտեսելով պատժի նպատակները և խաթարելով սահմանադրորեն պաշտպանվող շահերի անհրաժեշտ հավասարակշռությունը:

Մինչդեռ բողոքարկվող դատական ակտում Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ «(...) Առաջին ատյանի դատարանն ամբաստանյալ Արմեն Սադովնիչիյի նկատմամբ պատիժ նշանակելիս, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածով սահմանված պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքներով՝ բավարար չափով ստուգման և գնահատության է ենթարկել կատարած հանցանքի հանրության համար վտանգավորության աստիճանն ու բնույթը, ամբաստանյալի անձը բնութագրող և պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքները՝ այն, որ նա զղջացել է կատարածի համար, նախկինում դատված, արատավորված չի եղել, խնամքին են վատառողջ մայրը և թոշակառու տատը, ունի բարձրագույն կրթություն, բնութագրվում է դրական, ինչպես նաև պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքների բացակայությունը և գտել է, որ ամբաստանյալի նկատմամբ պետք է նշանակել պատիժ՝ ազատազրկում երկու տարի վեց ամիս ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ, այն է՝ 283.600 ՀՀ դրամին համարժեք գույքի: Առաջին ատյանի դատարանը, ղեկավարվելով ՀՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասով, 48-րդ հոդվածի 2-րդ մասով, 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, գտել է, որ Արմեն Սադովնիչիյի նկատմամբ նշանակված ազատազրկման ձևով պատիժը կապահովի պատժի նպատակները:

Վերաքննիչ դատարանը, քննության առնելով ամբաստանյալ Արմեն Սադովնիչիյի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառման հնարավորության և ՀՀ քրեական օրենսգրքի 48-րդ

հողվածով ամրագրված պատժի նպատակների իրացվելիության հարցերը, գտնում է, որ Արմեն Սադովնիչիյը ենթակա է պատժի կատարած հանցանքի համար՝ դատարանի կողմից նշանակված պատիժը համաչափ է կատարած արարքի ծանրությանը, ամբաստանյալի անձին և նա պետք է կրի ազատագրկման ձևով նշանակված պատիժը:

Վերաքննիչ դատարանը գտնում է, որ Արմեն Սադովնիչիյի նկատմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելը չի կարող ապահովել պատժի նպատակները, վերականգնել սոցիալական արդարությունը, ուղղել պատժի ենթարկված անձին, ինչպես նաև կանխել հանցագործությունները, և հանգում է հետևության, որ առկա չէ համոզվածություն, որ ամբաստանյալի ուղղվելը հնարավոր է առանց նշանակված պատիժը կրելու:

Այս առումով պաշտպանության կողմի պատճառաբանությունները չեն կարող բավարար հիմք հանդիսանալ սույն գործի շրջանակներում Արմեն Սադովնիչիյի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառմամբ նշանակված պատիժը պայմանականորեն չկիրառելու համար:

Քննության առնելով վերը նշված հանգամանքներն իրենց համակցության մեջ, [Վ]երաքննիչ դատարանը գտնում է, որ Առաջին ատյանի դատարանի դատավճիռը կայացվել է նյութական և դատավարական իրավունքի նորմերի պահպանմամբ, հետևաբար, այն պետք է թողնել օրինական ուժի մեջ(...):»:

Բողոքաբերի փաստարկների և բողոքարկվող դատական ակտի պատճառաբանությունների համադրված վերլուծության արդյունքում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ բողոքաբերի կողմից չի հիմնավորվել, որ առերևույթ թույլ է տրվել դատական սխալ, որը կարող էր ազդել գործի ելքի վրա:

Հետևաբար, բերված բողոքում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.2-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքը հիմնավորված չէ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժվում է, եթե բացակայում են սույն օրենսգրքի 414.1 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 414.2 հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմքերը, ուստի ներկայացված բողոքը վարույթ ընդունելը ենթակա է մերժման:

Հաշվի առնելով վերոշարադրյալ հիմնավորումները և ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 92-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 414.3-րդ հոդվածով՝ Վճռաբեկ դատարանը

ՈՐՈՇԵՑ

Արմեն Յուրիի Սադովնիչիյի վերաբերյալ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի 2014 թվականի դեկտեմբերի 17-ի որոշման դեմ ամբաստանյալ Ա.Սադովնիչիյի պաշտպան Գ.Մելիքյանիվ ճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժել:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

Նախագահող՝ Դ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

	Դատավորներ՝ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ Ե.ԴԱՆԻԵԼՅԱՆ Ս.ՕՀԱՆՅԱՆ
Այլ:	
Ամսաթիվ:	11-05-2015
Այլ նշումներ:	
Գործի առաքման ամսաթիվ:	18-05-2015
Դատարան:	Արմավիրի մարզ
Այլ նշումներ:	2 հատոր՝ 268, 222 թերթ: